

նը Սիւնեաց արքեպիսկոպոսին ինքն ալ պարգեւ կը յղէ Արածանիէն որսացուած ձկնէր (անդ, 45):

Նոյն ինքն դարձեալ կ'իմացնէ մեզ՝ թէ քանի՞ կերպով կը պատրաստուէին անոնք խոհանոցին մէջ: Կամ կը խորովէին շամփրով կրակի վրայ. կամ ջրով սանի մէջ. կամ իւղով տապակի մէջ. կամ կրակի կայծերու վրայ՝ քառանկիւնի եւ ուղղանկիւնի ձեւով պատած «արմանօք», որ մեկնութեան կը կարօտի. կամ երկայնաձեւ «կտապս» կազմելով, զոր կը կարծեմ խրմորով շաղած ու տապակած. կամ մանրելով ու «պարսկական խորտիկս» շինելով. եւ հուսկ՝ անոնց վրայ ցաննելով ոսկեգոյն քրքում, ռետին եւ յոսեմելի (.յն.) որ է քացախամեղր (անդ, 214):

Ծ. Փարպեցւոյն տեղեկութեանց մէջ կը գտնենք ազնուականաց սեղանին իրրեւ չորրորդ զարդ՝ «բազմազան վայրենի հաւուց անգու եւ անու», զորս ձկնորսաց ժիր մանկտին կը հաւաքէր «Գետոյն՝» այն է Երասխայ անմարդի մենաւոր կղզեկներէն, եւ կը բերէր կ'ընծայէր իւր իշխանաց (27): — Հաւանական է՝ թէ այս տեղ կը ճաշակէին ուրիշ կթեղէններն ալ՝ զորս տեսանք մշտապատրաստ կամ դեռ նոր բերուած դրուած շտեմարանաց մէջ (աստ, 16):